Էդիկ Զոհրաբյան

Նախիջևանի հիմնախնդիրը[1]

Ադրբեջանը, եթե Լեռնային Ղարաբաղի հարցում որդեգրել էր կոշտ ու անզիջում գործելակերպ՝ հայտարարելով, թե առանց Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը չի կարող գոյատևել, իսկ Զանգեզուրում փորձում էր գործի դնել կաշառքը, ապա Նախիջևանի հարցում առաջ էր մղում ինքնորոշման իրավունքը՝ վստահ մահմեդական մեծամասնության հակահայկական տրամադրությունների վրա: Հենց Բաքվի թելադրանքով էր, որ շուտով Երևան եկան Նախիջևանի հեղկոմի ներկայացուցիչները (մեծ մասը նախկին մուսուլմանական խորհրդի անդամներն էին) և Հայաստանի հեղկոմից պահանջեցին հռչակագիր հրապարակել Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալու մասին: Իրենց պահանջը նրանք հիմնավորում էին նրանով, թե իբր Բաքվում նախնական պայմանավորվածություն է կայացվել, որ Ադրբեջանի հեղկոմի հռչակագրին հետևելու է Հայաստանի հեղկոմի համապատասխան հռչակագիրը, և որ դա անհրաժեշտ է մուսավաթականների հակախորհրդային քարոզչությունը կանխելու համար: Դեկտեմբերի 24-ի նիստում Հայաստանի հեղկոմը քննության առավ հարցը՝ որոշելով հրապարակել համապատասխան հռչակագիր: «Կոմունիստ» օրաթերթի դեկտեմբերի 28-ի համարում տպագրված հռչակագրում նշվում է Ադրբեջանի կողմից Նախիջևանը Հայաստանի անբաժան մաս ճանաչելու մասին և ավելացնում, թե «Հայաստանի խորհրդային իշխանությունը՝ որպես ժողովրդի իշխանություն, իր կարողությունը տեսնում է միայն իր ազգաբնակչության՝ ըստ որում նաև Նախիջևանի աշխատավոր ժողովրդի, կամքի պարզ արտահայտության մեջ: … Հայաստանի Հեղկոմը հավատացած է, որ Նախիջևանի բռնությունից ազատ աշխատավորական մասսաները կարող են տալ իրենց պարզ և որոշ կազմակերպված կարծիքը՝ իրենց ցանկալի փոխհարաբերությունների մասին, ամբողջ աշխատավոր Խորհրդային Հայաստանի հետ»:

Չպետք է կարծել, թե Հայաստանի հեղկոմը չէր հասկանում, թե ինչ էր նշանակում Նախիջևանին ինքնորոշման իրավունք տալը (հավանաբար դա կատարվել էր Անդրկովկասի ղեկավար գործիչների թելադրանքով), բայց տարօրինակ է, որ ոչ մի պայման չի առաջադրվել (օրինակ՝ որ հանրաքվեն պետք է կատարվի բոլոր տարագրված նախիջևանահայերի վերադարձից հետո միայն): Բայց, ինչպես հետագա դեպքերն էլ ցույց տվեցին, բոլշևիկյան շրջանակներում ինքնորոշման իրավունքը լոկ կարգախոս էր և ոչ գործունեության միջոց: Հանրահայտ է, որ չնայած Ն.Նարիմանովի հռչակագրին՝ Լեռնային Ղարաբաղի հայությանն այդպես էլ ինքնորոշվելու հնարավորություն չտրվեց: Նախիջևանի հարցն էլ, ըստ էության, չլուծվեց, թեև ադրբեջանցի պատմաբանները, խոսքերը մեկ արած, գրում են, թե հանրաքվեի

[1] Հայոց պատմություն, հատոր IV, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, 2010, «Զանգակ» հրատարակչություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 362-367:

միջոցով բնակչության 90 տոկոսն արտահայտվել է Ադրբեջանի օգտին: Հայաստանի հեղկոմի դեկլարացիայի հրապարակումից երկու օր հետո՝ դեկտեմբերի 30-ին, Բ.Լեգրանը, արտգործժողկոմ Գ.Չիչերինին տեղեկացնելով այն մասին, թե Հայաստանի հեղկոմը Նախիջևանի ազգաբնակչությանը ինքնորոշման իրավունք է վերապահել, և որ քեմալականները իշխանությունը զավթելու փորձեր են անում, միաժամանակ նշում է, թե անհրաժեշտ է համարում, «ժամանակավորապես՝ մինչև բնակչության կամքի պարզելը և ռուս-թուրքական առաջիկա խորհրդաժողովում Նախիջևանի պետական պատկանելության հարցի լուծումը, Նախիջևանում կոմիսար նշանակել Ռուսաստանի կառավարության կողմից»[2]:

Բ. Լեգրանի հաղորդագրության այդ տողերը չեն կարող տարակուսանք չառաջացնել. նախկինում բազմիցս հայտարարելով, թե չի կարելի Հայաստանն առանց Նախիջևանի թողնել, հիմա նա խոսում է հարցը առաջիկա ռուս-թուրքական կոնֆերանսում լուծելու մասին: Նախիջևանի երկրամասը նախկինում երբեք Թուրքիայի կազմում չի եղել, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագիրը բոլշևիկներն իրավազոր չէին ճանաչել: Բայց և այնպես, Նախիջևանում գտնվող թուրքական ջոկատը (շուրջ 400 զինվոր) և նրա հրամանատար Վեյսալ բեյը Անկարայի ցուցումով դեկտեմբերի առաջին օրերից ամեն առիթ օգտագործում էին երկրամասում իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու համար: Իրական պատճառը պանթյուրքիզմի ծրագրերի տեսակետից Նախիջևանի երկրամասի խիստ կարևոր աշխարհագրական դիրքն էր, թեև քեմալականներն այդտեղ ևս թմբկահարում էին Անտանտի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին: 1920 թ. դեկտեմբերի 7-ին Ադրբեջանի հեղկոմի անդամ Բ. Շահթախթինսկին Ալեքսանդրապոլից հեռագրում է, թե թուրքերը չեն ժխտում քեմալական ղեկավարության կողմից ապագայում Անտանտի հետ որևէ համաձայնություն կնքելու հնարավորությունը, «ուստի ուզում են Նաախիջևանի մարզը, Շարուր- Դարալագյազի մի մասը և Մակուի խանությունը վերածել ինքնավար միավորի, որը Անտանտի հետ համաձայնության դեպքում թուրք ապստամբների համար բազա կծառայի Արևելքում Անտանտի դեմ պայքարը շարունակելու համար»[3]: Նա նաև հայտնում է, որ ինքը խորհուրդ է տվել այդ նպատակի համար ընտրել Բայազետի սանջակը և Վանի վիլայեթը: Սակայն գալով Նախիջևան և իմանալով Ն. Նարիմանովի հռչակագրի մասին՝ նա այդտեղ կազմակերպված բազմամարդ միտինգում հայտարարեց, թե «Ադրբեջանը ձեզ ծախեց, եթե ես Բաքվում լինեի, ապա դա թույլ չէի տա…: Այժմ ձեր հայացքն ուղղե՛ք թուրքերին: Նրանք ձեր միակ փրկությունն են: Ամո՛ւր բռնեք նրանցից»[4]:

Ադրբեջանի կոմունիստ ղեկավարների նման վարքագիծն ավելի էր ոգևորում Վեյսալ բեյին և նրա գործակալներին: Քեմալական էմիսարները բնակչության մեջ

---

[2] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., էջ 385:

[3] Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, 1979, էջ 222:

[4] Зограбян Э., Территориально-разграничительные вопросы на второй Московской русско-турецкой конференции, - ԼՀԳ, 1989, թիվ 2, էջ 7:

ուժեղ քարոզարշավ են ծավալում և որոշակի հաջողության հասնում Նախիջևանի կարմիր բանակում և վարչական ապարատներում մեծ թվով գործակալներ ունենալու շնորհիվ: Դեկտեմբերի վերջին Վեյսալ բեյը, օգտվելով Նախիջևանի արտակարգ կոմիսար Վելիբեկովի բացակայությունից (մեկնել էր Երևան), իրեն հռչակում է արտակարգ կոմիսար, բանտերից ազատում բոլոր հակահեղափոխականներին և հրամայում «արգելել Երևանից եկող գնացքների մուտքը Նախիջևան»: Սակայն Վելիբեկովի և ՌՍԴԽՀ ներկայացուցիչ Ստուդենի շտապ վերադարձը կանխում է նրան: 1921թ. հունվարի 7-ին Վեյսալ բեյն իշխանությունը զավթելու նոր փորձ է անում. Նախիջևանում կազմակերպում է ցույց և փորձում այն վերածել ապստամբության, բայց հաջողություն չի ունենում: Փետրվարին Հայաստանում սկիզբ առած քաղաքացիական պատերազմը նոր հույսեր է տալիս քեմալականներին: Փետրվարի 22-ին Վեյսալ բեյը հայերի ներխուժումը դիմագրավելու պատրվակով Վելիբեկովից պահանջում է Նախիջևանում գտնվող ռուսական զորամասը դնել իր հրամանատարության տակ: Ըստ այդմ՝ նա վկայակոչում է Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատարի հրամանը: Փետրվարի 24-ին Վեյսալ բեյի գործակալները զավթում են իշխանությունը Նախիջևանի շրջակա գյուղերում և պատրաստվում քաղաքի վրա արշավանքի: Ապստամբներին օգնելու նպատակով Վեյսալ բեյը Շահթախթիից ուղարկում է 25 ասկյար և մեկ սպա, իսկ Մակուի խանը՝ հեծյալ ջոկատ: Սակայն ռուսական զորամասն արագ և վճռական գործողություններով ճնշում է ապստամբությունը: Ապստամբություն կազմակերպելու միջոցով իշխանությունը զավթելու մեկ փորձ ևս Վեյսալ բեյը կատարում է մարտի կեսերին. նրա ուղարկած ասկյարները զավթում են Թիրքեշ գյուղը և փորձում բնակչությանը զինել ու ոտքի հանել: Բայց այդ անգամ էլ ռուսական զորամասն արագ երթով գրավում է գյուղը, իսկ Վեյսալ բեյն ստիպված է լինում ապստամբ ասկյարներին դասալիք հայտարարել:

Յուսուֆ Քեմալի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայի կոնֆերանսում մեկ վերջին ու եռանդուն փորձ արեց՝ Նախիջևանի երկրամասի նկատմամբ Թուրքիայի իրավունքները ճանաչել տալու համար: Զգտելով հիմնավորել Թուրքիայի իրավունքն այդ երկրամասի վրա՝ Յուսուֆ Քեմալը մե՛կ վկայակոչում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը, մե՛կ՝ ազգաբնակչության կողմից թուրքական զորքերի հրավիրումը՝ մոռանալով, սակայն, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրել էր արդեն իշխանությունը կորցրած կառավարության ներկայացուցիչը, և որը չէր ճանաչվել Խորհրդային Հայաստանի կողմից, իսկ թուրքական զորքերի հրավիրման փաստն իրավաբանական արժանահավատության ձև չէր ստացել: Չիչերինյան այդ հակափաստարկները բավականաչափ զորեղ էին և մի քանի օր տևած վեճերից հետո թուրքական կողմը, ի վերջո, տեղի տվեց: Մարտի 6-ին Բ. Շահթախթինսկին թուրքական պատվիրակության հետ ունեցած երկարատև զրույցից հետո հայտարարեց, թե «Նախիջևանի և Բաթումի հարցը այժմ նրանց քիչ է հետաքրքրում, որովհետև համոզվել են, որ այդ մարզերի շուրջ բոլոր վեճերն անօգուտ են»[5]:

---

[5] Хейфец А., Советская дипломатия и народы Востока, 1921-1927, с.98.

Նախիջևանի հարցի քննարկման ժամանակ Յուսուֆ Քեմալը հայտարարեց, թե «Նախիջևանը Թուրքիայի հովանավորության տակ է գտնվում, որի վկայությունը բնակչության կողմից թուրքական զորքերի հրավիրման փաստն է։ Այնուամենայնիվ նա համաձայն է այդ հովանավորությունը զիջել Ադրբեջանին՝ նրա կողմից այդ հովանավորությունը մի երրորդ պետության չզիջելու պարտավորության պայմանով»[6]։ Խոսքը, անշուշտ, Հայաստանի մասին էր, և պարզ էր, որ Նախիջևանի «հովանավորությունը մի երրորդ պետության չզիջելու պարտավորության» մասին միտքը թուրքերին հուշել էր Բ. Շահթախթինսկին, որը նրանց հետ մշտական կապ մեջ էր եղել, և որը Նարիմանովի հայտնի հռչակագիրը որակել էր որպես դավաճանություն Նախիջևանի հանդեպ։ Սակայն Յուսուֆ Քեմալն իր այդ պահանջը հիմնավորելու համար վկայակոչեց ավելի ծիծաղաշարժ պատճառաբանություն՝ այդ շրջանի մահմեդականների հալածանքի ենթարկվելը հայերի կողմից, թեև իրականում ուղիղ հակառակն էր։

Դիվանագիտության պատմությանը հազիվ թե հայտնի լինի նախադեպ, երբ պարտավորություն է դրվում մի պետության վրա, որը ներկայացված չէ կոնֆերանսում։ Գ.Չիչերինը փորձեց հենց այդ հանգամանքն օգտագործել՝ խուսափելու այդ ծանր պարտադրանքից, ինչը վիրավորական էր նաև Ռուսաստանի համար։ Նա առաջարկեց «սահմանափակվել՝ ուղղակի Նախիջևանի մարզը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելով»՝ առանց որևէ պարտավորություն հիշատակելու։ Բայց թուրքերը համառեցին, և Նախիջևանի մասին հոդվածն (3) ընդունվեց հետևյալ ձևակերպմամբ. «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ սույն պայմանագրի 1-ին (C) հավելվածում նշված սահմաններում կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»[7]։ Իսկ ո՞րն է Նախիջևանի մարզը։ Մարտի 12-ին, երբ կոնֆերանսը ձեռնարկեց Հայաստանի և Նախիջևանի միջև ռազմական փորձագետների կազմած սահմանների քննարկումը, պարզվեց, որ թուրք փորձագետների պնդմամբ Նախիջևանի մարզի մեջ են մտցվել ոչ միայն Նախիջևանի գավառը, Օրդուբադի շրջանը, Շարուր-Դարալագյազը, այլև Երևանի գավառի հարավարևելյան մասը՝ ընդհուպ մինչև Արարատ կայարանը։ Գ. Չիչերինն առարկեց նման ընդարձակ սահմանագծման դեմ՝ հայտարարելով, որ նույնիսկ մուսավաթականները «երբեք չեն հավակնել Երևանի գավառի այս կամ այն մասի վրա և միշտ իրենց ծայրագույն սահմանը համարել են Գայլի դրունքը», և առաջարկեց Նախիջևանի և Հայաստանի միջև համարել սահմանը ժամանակավոր, և «եթե հետագայում այդ երկու պետությունների միջև անմիջական բանակցությունների միջոցով սահմանի որևէ փոփոխություն կատարվի, այն չպետք է դիտել որպես պայմանագրի խախտում»[8]։ Պարզ է, որ Գ. Չիչերինն ուզում էր

---

[6] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 17, թ. 19։

[7] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 501։

[8] ՀԱԱ, ֆ. 113, ց.3, գ. 21, թ. 55։

հետագայում Հայաստանի օգտին սահմանի փոփոխման հնարավորություն ապահովել։ Սակայն թուրք պատվիրակները սկսեցին պնդել, թե այդ հարցը խիստ կարևոր է Թուրքիայի արևելյան սահմանների անվտանգության տեսակետից և պետք է վերջնական լուծում ստանա՝ բացառելով Հայաստանի և Ադրբեջանի միջև որևէ բանակցության հնարավորություն։

Ի վերջո կայացավ հետևյալ փոխզիջումային համաձայնությունը՝ «Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված հանձնաժողովը կշտկի Նախիջևանի տարածքի եռանկյունի կազմող գոտու՝ արևելքում Արաքսի հնահունի և արևմուտքում Դաղնա (3829)- Վելիդաղ (4121)- Բագարզիք(6587)- Քյոմուրլուդաղ (6930) լեռների վրայով անցնող գծի միջև պարփակված տարածքի սահմանագիծը, որն սկսվում է Քյոմուրլուդաղ (6930) սարից, հետո անցնում է Սերայբուլաք սարի վրայով դեպի Արարատ կայարանը և վերջանում է Քարասուի և Արաքսի տրամախաչման տեղում»[9]։

Այսպես՝ Թուրքիան հետևողականորեն իրագործեց իր հայատյաց քաղաքականությունը և ավարտին հասցրեց Հայաստանի անդամահատումը՝ նրանից պոկելով և Ադրբեջանին հանձնելով «Նախիջևանի մարզ» անվանված լայնածավալ երկրամասը։

Նախապատրաստվելով Կարսի կոնֆերանսին՝ 1921թ. մայիսի 7-ին Բաքվում գումարված երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը քննարկեց նաև Մոսկվայի պայմանագրում փոփոխությունների և լրացումների հարցը և ելնելով Հայաստանի ու Նախիջևանի միջև սահմանի ճշտման վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածից՝ որոշեց «միջոցներ ձեռք առնել տեղում Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրելու սահմանի ճիշտ որոշման հարցը, ազգագրական սկզբունքի, նմանապես և տեղական բնակչության կողմից այդ հարցի շուրջը հաստատված հայացքների համաձայն»[10]։

Հայ-ադրբեջանական հանձնաժողովը կարճ ժամանակամիջոցում ավարտեց աշխատանքը՝ կայացնելով համաձայնություն, ըստ որի՝ Հայաստանի սահմանը Նախիջևանի հետ պետք է սկսվի ոչ թե Արարատ կայարանից ու ձգվի դեպի Սարայբուլաղ- Քյոմուրլուդաղ լեռը և այնուհետև այնպես, ինչպես Մոսկվայի պայմանագրի (C) հավելվածում է, այլ պետք է սկսվի Արազդայան կայարանի մոտից (վերջինս մնում է Հայաստանին), բարձրանա դեպի Դաշբուռուն լեռը, Շարուր-Դարալագյազի գավառի վարչական սահմանագծի երկարությամբ հասնի Քյոմուրլուդաղ և այնուհետև՝ ինչպես նշված է Մոսկվայի պայմանագրի 1(C) հավելվածում։ Այդպիսով՝ Երևանի գավառի հարավային անջատված մասը (Արարատ-Քյոմուրլուդաղ-Արազդայան եռանկյունի) վերադարձվում է Հայաստանին։ Տարածքը մեծ չէ, բայց կարևոր հատված է Դարալագյազի հետ տրանսպորտային կապի ապահովման, ինչպես նաև Նախիջևանի հետ Թուրքիայի սահմանի կրճատման

---

[9] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 501։

[10] Նույն տեղում, էջ 515։

տեսանկյունից։ Մնում էր դեռ ստանալ Թուրքիայի համաձայնությունը Կարսի կոնֆերանսում։

Կարսի կոնֆերանսի կապակցությամբ Հայաստանի կառավարությունը կազմել էր հուշագիր, որում շարադրված էին կոնֆերանսի քննարկմանը ներկայացվող հարցերը։ Առաջարկվում էր սահմանների որոշ ուղղում կատարել Սուրմալուի գավառում, Նախիջևանի երկրամասում և Արփաչայի գոտում։

Նախիջևանի հարցում հուշագիրն առաջարկում էր կա՛մ Նախիջևանի երկրամասի նկատմամբ հովանավորության իրավունքը հանձնել Հայաստանին, կա՛մ նրա հետ սահմանն անցկացնել Քյանդը Խոկ- Ազնաբերդ-Սուլթանբեկ-Կյուկիդաղ ուղիղ գծով։

Սակայն կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը, ղեկավարվելով բացառապես սեփական շահերով, վճռականորեն մերժում էր անդրկովկասյան պատվիրակությունների յուրաքանչյուր առաջարկ։ Այդպիսի պայմաններում անիմաստ էր Նախիջևանի պատկանելության հարցը քննարկման նյութ դարձնել, և հայ պատվիրակները որոշեցին բավարարվել՝ միայն Արարատ կայարան-Քյոմուրլուդաղ լեռ-Արազդյան կայարան եռանկյունին Հայաստանին վերադարձնելու վերաբերյալ Ադրբեջանի հետ արդեն կայացրած համաձայնությունը կոնֆերանսում հաստատել տալով։ Թուրքական պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիր փաշան փորձեց բացատրություն պահանջել, բայց երբ անդրկովկասյան պատվիրակները հայտարարեցին, որ իրենք այդ հարցը լուծված են համարում, տեղի տվեց և ետ վերցրեց իր առաջարկությունը՝ հավելելով, որ եթե Ադրբեջանը համաձայնվել է դրան, ապա դա ընդունելի է նաև թուրքերի համար։ Այսպիսով՝ վերը նշված եռանկյունին ամրագրվեց Հայաստանի սահմաններում, որն իր արտացոլումը գտավ Կարսի պայմանագրի 3-րդ հավելվածում, որում տրված էր Նախիջևանի տարածքի սահմանագծումը։ Ինչ վերաբերում է Նախիջևանի կարգավիճակին, ապա պայմանագրի 5-րդ հոդվածում ասված է. «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ սույն պայմանագրի III հավելվածում նշված սահմաններում Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»[11]։ Այսպիսով հայկական երկրամասը հայտնվեց ՀՍԽՀ սահմաններից դուրս, ինչը խորհրդա-թուրքական հակահայկական հանցավոր գործակցության արդյունք էր։

[11] Նույն տեղում, էջ 520։